ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 02.11.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2017/41

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ) ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 29.08.2017թ. թիվ 03/26-3/15725-17 գրությամբ «Լեյկոալեքս» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 04414816) (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով (այսուհետ՝ նաև պաշտոնական ընթացակարգ) ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 23.08.2017թ. թիվ ԴՎԱ/2788 գրության հիման վրա, 29.08.2017թ. թիվ 03/26-3/15725-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնել է «Լեյկոալեքս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգ:

2. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարությունը 23.08.2017թ. թիվ ԴՎԱ/2788 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ ՊՆ կարիքների համար կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/16» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով «բժշկական պարագաների» գնման ընթացակարգի մի շարք չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «Լեյկոալեքս» ՍՊԸ-ն: Մասնակիցը սահմանված ժամկետում և կարգով ներկայացրելէ իր կողմից առաջարկվող ապրանքատեսակների տեխնիկական բնութագրերը: Ուսումնասիրության արդյունքում, ինչպես նաև հիմք ընդունելով պատասխանատու տորաբաժանման կողմից ներկայացված համապատասխան մասնագիտական եզրակացությունները՝ գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ ներկայացված տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին (համարժեք չեն): Մասնակիցը ծանուցվել է դրա վերաբերյալ, և վերջինիս առաջարկվել է շտկել անհամապատասխանությունը: Մասնակիցը որպես շտկում սահմանված կարգով ներկայացրել է նոր տեխնիկական բնութագիր և պարզաբանումներ, որոնք նույնպես հանձնաժողովի կողմից գնահատվել են որպես հրավերի տեխնիկական բնութագրին ոչ համարժեք և մասնակցի հայտը մերժվել է»:

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր ՀՀ պաշտպանության նախարարության լիազորված ներկայացուցիչ Նորայր Հարությունյանը:

3. «Լեյկոալեքս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Լեյկոալեքս» ՍՊԸ-ն 14.09.2017թ. Խորհրդին ուղղված էլեկտրոնային գրությամբ հայտնել է հետևյալը.

««Լեյկոալեքս» ՍՊԸ-ն (այսուհետև՝ Մասնակից), մասնակցել է ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետև՝ Պատվիրատու), կարիքների համար «բժշկական պարագաների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/16» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետև՝ Ընթացակարգ), մի շարք չափաբաժիններով:

Ընթացկարգի հրավերով սահմանվել են ձեռք բերվող ապրանքների տեխնիկական բնութագրերը:

Օրինակ՝ չափաբաժին 1, Մոնոֆիլամենտ սինթետիկ կարանյութ (ներծծման միջին ժամկետով 90-110 օր) (5-0) գնման առարկայի համար տեխնիկական բնութագիր է սահմանված՝ մեջբերում եմ. «...ասեղը կոռոզիակայուն, բարձր ամրության համաձուլվածքը էտալոյ կամ համարժեք-համաձուլվածքը պատված է սիլիկոնով, որը նվազեցնում է շփումը հյուսվածքների և ասեղի միջև: ...Թելի միացումը ատրավմատիկ ասեղին ամուր է, ասեղի տրամագիծը թելին միացման մասում ոչ ավել, քան 1,15 անգամ, որի շնորհիվ նվազում է հյուսվածքների տրավմատիզացիան, ասեղի անցնելու ժամանակ.....»: Մեջբերման մեջ տեծնիկական բնութագրից առանձնացված է միայն խնդրո առարկա հանդիսացող հատվածը:

Մասնակիցը Պատվիրատուի կողմից ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող որոշ չափաբաժինների մասով, ու առաջարկվել է ներկայացնել գնման ընթացակարգի հրավերով սահմանված որակավորումը հիմնավորող փաստաթղթերը, ներառյալ՝ մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը:

Սահմանված ժամկետում Մասնակցի կողմից ներկայացվել է ծանուցման մեջ նշված փաստաթղթերը:

Պատվիրատուի գնահատող հանձնաժողովը Մասնակցի կողմից ներկայացրած տեխնիկական բնութագրերում արձանագրել է անհամապատասխանություններ:

Անհամապատասխանության վերաբերյալ ծանուցման մեջ որպես խնդրո առարկա նշված է.

- համաձայն մրցույթի հրավերի պահանջների վիրաբուժական կարանյութերի ասեղները պետք է կազմված լինեն էտալոյ կամ համարժեք համաձուլվածքից, որն էլ իր հերթին կազմված է հետևյալ բաղադրատարրերից՝ համապատասխան տոկոսային հարաբերակցությամբ. Երկաթ՝ 73%, քրոմ՝ 12%, նիկել՝ 10%, մոլիբդեն՝ 3% տիտան և տանտալ՝ 2%: Մասնակցի կողմից որպես համարժեք ներկայացված վիրաբուժական կարանյութերի «Պրեմիում դասի» ասեղը կազմված է՝ երկաթը՝ 72,8%, քրոմը՝ 16%, նիկելը՝ 7,7%, մոլիբդենը՝ 2,3%, տիտանը և տանտալը՝ 1,2%: Կան հստակ անհամապատասխանություններ բաղադրակազմի տոկոսային հարաբերակցության մեջ, որով պայմանավորված են վիրաբուժական կարանյութերի ասեղների հիմնական բնութագրող հատկանիշները: Ինչպես նաև անհասկանալի է «Պրեմիուամ դասի» անվանումը, քանի որ նման համաձուլվածք, որը կկիրառվի բժշկության մեջ, անհայտ է, ինչպես նաև կազմակերպության կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերում

առկա է արտադրող գործարանի համապատասխան որակի հավաստագրերը ասեղների վերաբերյալ, որոնցում նշում չկա նման տեսակի ասեղի մասին:

- թելի և ասեղի տրամագծի պահանջվող հարաբերակցությունը 1:1,15 է, իսկ Մասնակցի տեխնիկական բնութագրում նշվում է մոտավորապես 1:1 հարաբերակցություն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ տեխնիկական բնութագրում նշված է, որ անցքը ասեղի հետնամասում կատարվում է լազերի միջոցով, և թելը պետք է ավելի փոքր լինի, քան ասեղի անցքը, ապա միացման տեղում ասեղի տրամագիծ և փելի տրամագիծ հարաբերակցությունը չի կարող լինել 1:1, սա նույնպես էական տարբերություն է կազմակերպության կողմից ներկայացված տեխնիկական բնութագրի և իրական պատկերի հետ:

Ստորև ներկայացվում է Մասնակցի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրից խնդրո առարկա հանդիսացող հատվածը.

«....Ասեղը կոռոզիակայուն, բարձր ամրության Premium դասի (երկաթը՝ 72,8%, քրոմը՝ 16%, նիկելը՝ 7,7%, մոլիբդենը՝ 2,3%, տիտանը և տանտալը՝ 1,2%), պատված է սիլիկոնով, որը նվազեցնում է շփումը հյուսվածքների և ասեղի միջև, ունի երկայնական միկրոսկոպիկ գծավորություն, որոնք լավացնում են ասեղի ֆիքսացիան ասեղնաբռնիչում: .... Ասեղի անցքը փորված կամ բացված է լազերով, որը ապահովում է թելի հետ ատրավմատիկ միացումը, թելի և ասեղի տրամագծերի լավագույն հարաբերակցության շնորհիվ (մոտավորապես 1:1), որի շնորհիվ նվազում է հյուսվածքների տրավմատիզացիան ասեղի անցնելու ժամանակ»:

Ինչպես երևում է վերը շարադրվածից, Պատվիրատուի կողմից գնման առարկայի տեխնիկական բնութագրում ձևակերպված «էտալոյ կամ համարժեք համաձուլվածք» ձևակերպումը հրավերով նախապես բացված չէ ըստ նյութերի բաղադրության տոկոսների և միայն Մասնակցի կողմից բացվածքներով տեխնիկական բնութագրեր ներկայացնելուց հետո է այն ենթարկվում մանրակրկիտ վերլուծության և համեմատության: Սակայն, համաձայն գործող «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը, Պատվիրատուն հրավերով պետք է նախապես ներկայացներ տվյալ նյութի մանրամասն տոկոսներով բացվածքը, որպեսզի Մասնակցի համար այն ամբողջովին հասկանալի լիներ և բացառեր այլընտրանքային մեկնաբանությունը:

Մյուս անհամապատասխանությունն է հանդիսացել թելի և ասեղի տրամագծերի հարաբերակցությունը: Ինչպես երևում է վերը շարադրվածից՝ Պատվիրատուն հրավերով տեխնիկական բնութագրում տվյալ մասով սահմանել է ասեղի տրամագիծը թելին միացման մասում ոչ ավել քան 1,15 անգամ, Մասնակիցը տեխնիկական բնութագրով ներկայացրել է «մոտավորապես 1:1» ու նշել, որ դրա շնորհիվ նվազում է հյուսվածքների տրավմատիզացիան ասեղի անցնելու ժամանակ:

Ինչպես նկատում ենք, Մասնակիցը չի ներկայացրել կոնկրետ 1:1, այլ նշել է «մոտավորապես 1:1»՝ շատ լավ գիտակցելով, որ տվյալ հատվածում 1:1 հարաբերակցություն չի կարող լինել, այլ ընդամենը Պատվիրատուի կողմից սահմանված 1:1,15 այս չնչին տարբերությունը փոխարինել է «մոտավորապես» բառով:

Ավելացնեմ նաև, որ սույն գնման ընթացակարգին մասնակցելուց առաջ, Մասնակիցը բանավոր խորհրդակցել է իր կողմից առաջարկվող ապրանքները արտադրող ընկերության համապատասխան մասնագետների հետ, որոնք, համեմատելով սույն գնման ընթացակարգով նախատեսված ապրանքները իրենց արտադրած ապրանքների հետ, հաստատել են, որ դրանք համարժեք են, ինչի մասին կա նաև գրավոր եզրակացություն, որը կցվում է տվյալ դիմումին»:

Խորհրդում տեղի ունեցած նիստերին մասնակցում էին Ընկերության տնօրեն Գագիկ Ալեքսանյանը, ինչպես նաև Ընկերության լիազորված ներկայացուցիչներ Աշոտ Զարգարյանը և Էդվարդ Գրիգորյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2017/41 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը</u>

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 29.08.2017թ. թիվ 03/26-3/15725-17 գրությունը և կից նյութերը, ՀՀ պաշտպանության նախարարության 23.08.2017թ. թիվ ԴՎԱ/2788 գրությունը, «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/16» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/16» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 30.03.2017թ. ժամը 15:30-ին կայացած նիստի N 3, և 31.05.2017թ. ժամը 11:00-ին կայացած նիստի N 4 արձանագրությունները, «Լեյկոալեքս» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգին ներկայացված

մասնակցության հայտի պատճենը, ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչության կողմից ներկայացված եզրակացությունը Ընթացակարգի մասնակիցների որակավորման փաստաթղթերի համապատասխանության վերաբերյալ, Ընկերության 14.09.2017թ. ներկայացված դիրքորոշումը, ինչպես նաև Ընկերության 11.10.2017թ. գրությունը և դրան կից ՀՀ առողջապահության նախարարության 06.10.2017թ. թիվ ՆԶ/22.2/12476-17 գրությամբ ներկայացված կարծիքը.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/16» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) 1-ից 38-րդ չափաբաժինների մասով մասնակցության հայտ է ներկայացրել «Լեյկոալեքս» ՍՊԸ-ն:

Ընկերությունը ընթացակարգին ներկայացված հայտի N 4.1 հավելվածով՝ առաջարկվող ապրանքների՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/16» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում իր կողմից ներկայացված հայտով առաջարկվող՝ (1-38) չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/16» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերին:

Հանձնաժողովը 30.03.2017թ. ժամը 15:30-ին կայացած նիստի N 3 արձանագրության 4.1 կետով Ընկերությանը ճանաչել է առաջին տեղն զբաղեցրած մասնակից՝ մի շարք չափաբաժինների մասով:

Հանձնաժողովը 07.07.2017թ. էլեկտրոնային եղանակով ծանուցել է Ընկերությանը՝ առաջարկելով հրավերով սահմանված ժամկետում և կարգով ներկայացնել ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

31.05.2017թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետով Հանձնաժողովը՝ հիմք ընդունելով պատասխանատու ստորաբաժանման կողմից 16.06.2017թ. տրված մասնագիտական եզրակացությունները, արձանագրել է, որ «առաջարկված բոլոր չափաբաժինների մասով «Լեյկոալեքս» ՍՊԸ-ի կողմից

առաջարկված տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին, մասնավորապես՝

1. Համաձայն մրցույթի հրավերի պահանջների վիրաբուժական կարանյութերի ասեղները պետք է կազմված լինեն էտալոյ կամ համարժեք համաձուլվածքից, որն իր հերթին կազմված է հետևյալ բաղադրատարրերից՝ համապատասխան տոկոսային հարաբերակցությամբ. երկաթ 73 %, քրոմ 12% , նիկել 10 %, մոլիբդեն 3% , տիտան և տանտալ 2%, /որպես համարժեք ներկայացված ՌԴ արտադրության ՄՁԿՌՍ վիրաբուժական կարանյութերի ասեղը կազմված է AISI 321 համաձուլվածքից, որի բաղադրությունը հետևյալն է. երկաթը 70,82%, քրոմ 12%, նիկելը 9-12%, մոլիբդենը բացակայում է, տիտանը 0,5% /հիմք՝ http://www,pishmash.com/stat_i/harakteristiki_nerjaveyuwej_stali_aisi_321/: Մրցույթին ներկայացված բնութագրում մասնակիցը նշում է, որ ասեղները բաղկացած են AISI 321 համաձուլվածքից, և նշում է, որ այդ համաձուլվածքը նիկելային միացություններ չի պարունակում, բայց համաձայն վերը նշված կայքի՝ այդ համաձուլվածքը պարունակում է 9-12% նիկել, այսինքն, առկա է հստակ անհամապատասխանություն համացանցային կայքի տվյալների և տեխնիկական բնութագրի, ինչպես նաև մրցութային պահանջի և տեխնիկական բնութագրի միջև:

2. Ձևի հիշողության էֆեկտի առաջացման հատկություն – մրցութային պայմաններով պահանջվում է, որ թելը պետք է փաթեթավորված պլաստիկե կամ այլ կոշտ ներդիրով, որը կապահովի թելը հանելուց հետո ձևի հիշողության էֆեկտի բացառում: Մասնակցի տեխնիկական բնութագրում չկա որևէ նշում փաթեթավորման այդ պայմանի և առանձնահատկության մասին , որը շատ կարևոր է, քանի որ հիշողության էֆեկտի պատճառով թելը տուփից հանելուց հետո՝ կարելու ժամանակ, կարող է ոլորվել, հանգուցվել, ինչի հետևանքով վիրաբույժը ստիպված կլինի խոտանել թելը և վերցնել նորը, ինչը կբերի լրացուցիչ ծախսերի, հյուսվածքների լրացուցիչ տրավմատիզացիայի, և վիրահատական միջամտության ժամանակի ավելացման:

3. Անդառնալի դեֆորմացիայի ուժի սահմանափակում – մրցութային պայմաններով պահանջվում է, որպեսզի ասեղի նյութերը և կառուցվածքը ապահովեն բարձր կայունություն անդառնալի դեֆորմացիայի նկատմամբ ոչ պակաս քան 4,6Н/cm, որը կկանխի դեֆորմացիայի պատճառով նոր թել վերցնելու անհրաժեշտությունը: Մասնակցի տեխնիկական բնութագրում չկա որևէ նշում տվյալ պարամետրի վերաբերյալ»:

Նույն արձանագրությամբ ՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (այսուհետ՝ Կարգ) 51-րդ կետը, Հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել Ընկերությանը մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝

համաձայն մրցույթի հրավերի պահանջների վիրաբուժական կարանյութերի ասեղները պետք է կազմված լինեն էտալոյ կամ համարժեք համաձուլվածքից, որն իր հերթին կազմված է հետևյալ բաղադրատարրերից՝ համապատասխան տոկոսային հարաբերակցությամբ. երկաթ 73%, քրոմ 12% , նիկել 10 %, մոլիբդեն 3%, տիտան և տանտալ 2%, /որպես համարժեք ներկայացված վիրաբուժական կարանյութերի «պրեմիում դասի» ասեղը կազմված է՝ երկաթը 72,8%, քրոմ 16%, նիկելը 7,7%, մոլիբդենը 2,3%, տիտանը և տանտալը 1,2%: Կան հստակ անհամապատասծանություններ բաղադրակազմի տոկոսային հարաբերակցության մեջ, ինչպես նաև անհասկանալի է «պրեմիում դասի» անվանումը, քանի որ նման համաձուլվածք, որը կկիրառվի բժշկության մեջ, անհայտ է, ինչպես նաև նախկինում կազմակերպության կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերում առկա էր արտադրող գործարանի համապատասխան որակի հավաստագրերը ասեղների վերաբերյալ, որոնցում նշում չկար նման տեսակի ասեղի մասին,

թելի և ասեղի տրամագծի պահանջվող հարաբերակցությունը 1:1,15 է, տեխնիկական բնութագրում նշվում է՝ մոտավորապես 1:1 հարաբերակցություն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ տեխնիկական բնութագրում նշված է, որ անցքը ասեղի հետնամասում կատավում է լազերի միջոցով, և թելը պետք է ավելի փոքր լինի, քան ասեղի անցքը, ապա միացման տեղում ասեղի տրամագիծ և փելի տրամագիծ հարաբերակցությունը չի կարող լինել 1:1, սա նույնպես էական տարբերություն է կազմակերպության կողմից ներկայացված տեխնիկական բնութագրի և իրական պատկերի հետ:

Հանձնաժողովի կողմից արձանագրվել է նաև, որ սինթետիկ կարանյութ /ներծծման միջին ժամկետով 90-110 օր/ 1-4-րդ չափաբաժիններում կա մրցութային պայման ամրության վերաբերյալ, որն է՝ չներկված թելը 50% 7 օր և 20%՝ 2 շաբաթ: Ներկայացված տեխնիկական բնութագրում չկա որևէ ինֆորմացիա այդ պարամետրերի վերաբերյալ: Չներկված թելերն անհրաժեշտ են կոսմետիկ միջամտությունների ժամանակ և նրանց ներծծման ժամկետը խիստ կարևոր է վիրաբույժի և հիվանդի համար:

11-16-րդ չափաբաժիններում մրցութային պայմաններով պահանջվում է, որ մոնոֆիլամենտը պատրաստված լինի պոլիպրոպիլենից, մասնակցի տեխնիկական բնութագրում ներկայացված է իզոտակտիկ բյուրեղային ստերեոիզոմեր պոլիպրոպիլենից, սինթետիկ գծային պոլիոլիֆինից:

17-20 չափաբաժիններում մրցութային պայմաններով պահանջվում է, որ օգտագործվող նյութերը չպետք է ունենան անտիգենային հատկություններ, թելը ներկված է կոնտրաստային /կապույտ/: Ներկայացված տեխնիկական բնութագրով չկա որևէ ինֆորմացիա այդ այդ պարամետրերի վերաբերյալ: Թելի կոնտրաստ գույնը հնարավորություն է տալիս ապահովել թելի տեսանելիությունը վերքի մեջ:

21-23-րդ չափաբաժիններում մրցութային պայմաններով պահանջվում է, որ թելը պատրաստված է պոլիէթիլենտերեֆտալատ /պոլիէսթեր/ նյութից: Ներկայացված տեխնիկական բնութագրում առկա են տերեֆտալատի պոլիէսթեր և էթիլենգլիկոլ, որը տոքսիկ նյութ է և առկա է օրգանիզմի թունավորման ռիսկ:

25-30-րդ չափաբաժիններում մրցութային պայմաններով պահանջվում է, որ 3-0 և ավելին հաստության թելը պահպանում է IN VIVO պայմաններում 60% ամրություն 2 շաբաթ, 40% 4 շաբաթ, 35% 6 շաբաթ: Ներկայացված տեխնիկական բնութագրերում առկա է միայն հետևյալ ինֆորմացիան՝ 6 շաբաթից ամրությունը կազմում է 40-60%: Թելի ամրության պահպանման ժամկետները ունեն կարևոր կլինիկական նշանակություն վերքի ճիշտ համադրման, կարանյութի ընտրության և վերքի լավացման համար:

31-37-րդ չափաբաժիններում մրցութային պայմաններով պահանջվում է, որ որ 6-0 և ավելին հաստության համար թելը պահպանում է IN VIVO պայմաններում 75% ամրություն, 50% 3 շաբաթ, 25% 4 շաբաթ, ամբողջությամբ ներծծման ժամկետը 56-70 օր: Ներկայացված տեխնիկական բնութագրում 65-75% 2 շաբաթ, 40-50% 3 շաբաթ, ամբողջությամբ ներծծման ժամկետը 60-90 օր:

Հանձնաժողովը արձանագրել է նաև, որ Ընկերության կողմից ներկայացված վիրաբուժական կարանյութերը չեն կիրառվել ՀՀ պետական առողջապահական ոչ մի համակարգում, ուստի անհնար է ճշտել դրանց կիրառման փորձը մեծածավալ վիրահատությունների ժամանակ:

Հանձնաժողովը 17.07.2017թ. էլեկտրոնային եղանակով ծանուցել է Ընկերությանը՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել ծանուցման մեջ նշված անհամապատասխանությունները:

Ընկերությունը սահմանված ժամկետում ներկայացրել է հայտի N6.1 հավելվածով իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը՝ հետևյալ բովանդակությամբ, մասնավորապես. «....Ասեղը կոռոզիակայուն, բարձր ամրության Premium դասի (երկաթը՝ 72,8%, քրոմը՝ 16%, նիկելը՝ 7,7%, մոլիբդենը՝ 2,3%, տիտանը և տանտալը՝ 1,2%), պատված է սիլիկոնով, որը նվազեցնում է շփումը հյուսվածքների և ասեղի միջև, ունի երկայնական միկրոսկոպիկ գծավորություն, որոնք լավացնում են ասեղի ֆիքսացիան ասեղնաբռնիչում: .... Ասեղի անցքը փորված կամ բացված է լազերով, որը ապահովում է թելի հետ ատրավմատիկ միացումը, թելի և ասեղի տրամագծերի լավագույն հարաբերակցության շնորհիվ (մոտավորապես 1:1), որի շնորհիվ նվազում է հյուսվածքների տրավմատիզացիան ասեղի անցնելու ժամանակ»:

Արձանագրելով, որ սահմանված ժամկետում Ընկերության կողմից ներկայացվել են պահանջված փաստաթղթերը, Հանձնաժողովը նշել է, որ դրանց գնահատման արդունքում, ինչպես նաև հիմք ընդունելով պատասխանատու ստորաբաժանման կողմից 20.07.2017թ. ներկայացված մասնագիտական եզրակացությունը՝ Հանձնաժողովը որոշել է նույն արձանագրությամբ «Լեյկոալեքս» ՍՊԸ-ի հայտը մերժել՝ հետևյալ հիմնավորմամբ. բոլոր առաջարկված չափաբաժինների մասով Ընեռության կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերը համարժեք չեն մրցույթի հրավերի պահանջներին, քանի որ չի շտկվել հետևյալ անհամապատասխանությունը. «համաձայն մրցույթի հրավերի պահանջների վիրաբուժական կարանյութերի ասեղները պետք է կազմված լինեն էտալոյ կամ համարժեք համաձուլվածքից, որն իր հերթին կազմված է հետևյալ բաղադրատարրերից՝ համապատասխան տոկոսային հարաբերակցությամբ. երկաթ 73%, քրոմ 12% , նիկել 10 %, մոլիբդեն 3% , տիտան և տանտալ 2%, /որպես համարժեք ներկայացված վիրաբուժական կարանյութերի «պրեմիում դասի» ասեղը կազմված է՝ երկաթը 72,8%, քրոմ 16%, նիկելը 7,7%, մոլիբդենը 2,3%, տիտանը և տանտալը 1,2%: Կան հստակ անհամապատասծանություններ բաղադրակազմի տոկոսային հարաբերակցության մեջ, ինչպես նաև անհասկանալի է «պրեմիում դասի» անվանումը, քանի որ նման համաձուլվածք, որը կկիրառվի բժշկության մեջ, անհայտ է, ինչպես նաև Ընկերության կողմից ներկայացված որակավորման փաստաղթերում առկա է արտադրող գործարանի համապատասխան որակի հավաստագրերը ասեղների վերաբերյալ, որոնցում նշում չկար նման տեսակի ասեղի մասին»:

04.09.2017թ. Խորհրդում տեղի ունեցած նիստի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչը պնդեց ՀՀ պաշտպանության նախարարության 23.08.2017թ. թիվ

ԴՎԱ/2788 գրությամբ հայտնած դիրքորոշումն այն մասին, որ Ընկերության հայտը մերժվել է վերջինիս կողմից ներկայացված տեխնիկական բնութագրի հրավերով սահմանված պահանջներին արձանագրված անհամապատասխանությունները սահմնված ժամկետում չշտկելու հիմնավորմամբ: Մասնավորապես, ՀՀ ՊՆ լիազորված ներկայացուցիչը վկայակոչեց Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման կողմից 20.07.2017թ. ներկայացված մասնագիտական եզրակացությունն այն մասին, որ Ներության կողմից հայտով ներկայացված վիրաբուժական կարանյութերի ասեղների բաղադրակազմի տոկոսային հարաբերակցությունը չի համապատասխանում Ընթացակարգի հրավերով նախատեսված պահանջներին:

«Լեյկոալեքս» ՍՊԸ-ի ներկայացուցիչը նշեց, որ Հանձնաժողովի կողմից որպես անհամապատասխանության հիմք նշված՝ Ընթացակարգի հրավերով նախատեսված վիրաբուժական կարանյութերի ասեղների «էտալոյ կամ համարժեք համաձուլվածք» ձևակերպումը նախապես բացված չի եղել ըստ նյութերի բաղադրության տոկոսների և միայն Ընկերության կողմից բացվածքներով տեխնիկական բնութագրեր ներկայացնելուց հետո է այն ենթարկվել մանրամասն վերլուծության և համեմատության: Մինչդեռ, ակնհայտ է, որ եթե Պատվիրատուի կողմից նշված «էտալոյ կամ համարժեք համաձուլվածք» հատկանիշն ի սկզբանե ներկայացված լիներ Հրավերի տեխնիկական բնութագրում ըստ առանձին բաղադրատարրերի տոկոսային հարաբերակցության, ապա Ընկերության համար այն ամբողջովին հասկանալի կլիներ և կբացառվեր նշված հատկանիշի տարակերպ մեկնաբանությունը:

Ընկերության տնօրենը Խորհրդին տեղեկացրեց նաև, որ «Լեյկոալեքս» ՍՊԸ-ն դիմել է ՀՀ առողջապահության նախարարություն՝ Հրավերով սահմանված և Ընկերության կողմից հայտով ներկայացված ապրանքների համարժեքության վերաբերյալ փորձագիտական եզրակացություն ստանալու նպատակով, և ներկայացրեց «Լեյկոալեքս» ՍՊԸ-ի վերը նշված հարցմանն ի պատասխան ՀՀ առողջապահության նախարարության կողմից 06.10.2017թ. ստացված թիվ ՆԶ/22.2/12476-17 գրությունը, ըստ որի ՀՀ առողջապահության նախարարությունը հայտնել է, որ Ընկերության կողմից բարձրացված հարցերը դուրս են նախարարության կարգավորման շրջանակից: Վերջինս նշեց նաև, որ ըստ իր կողմից հավաքագրված տվյալների, ներկայումս Հայաստանի Հանրապետությունում գոյություն չունի համապատասխան լաբորատորիա, որտեղ հնարավոր կլինի անցկացնել փորձաքննություն և ստանալ մասնագիտական

եզրակացություն, ուստի անհասկանալի է, թե Պատվիրատուի գնահատող հանձնաժողովն ինչպես է կատարել Ընկերության հայտի համապատասխանության գնահատումը:

Խորհրդի այն հարցին, թե տեղեկատվության ինչ աղբյուրներից է օգտվել գնահատող հանձնաժողովը Ընկերության կողմից ներկայացված ապրանքի համարժեքությունը գնահատելիս՝ Պատվիրատուի ներկայացուցիչը նշեց, որ Ընկերության հայտով ներկայացված վիրաբուժական կարանյութերի ասեղների բաղադրակազմի տոկոսային հարաբերակցության վերլուծության ընթացքում Հանձնաժողովը հիմք է ընդունել http://www,pishmash.com/stat_i/harakteristiki_nerjaveyuwej_stali_aisi_321/ համացանցային կայքում զետեղված տեղեկատվությունը:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (այսուհետ՝ Կարգ)

- 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը,
- 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին.
- 49-րդ կետի համաձայն՝ (...) ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

• 51-րդ կետի համաձայն՝առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

• 52-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/16» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու հրավերի 7.5 կետի 1-ին ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը ոչ ավտոմատ եղանակով ծանուցում է հրավերի պահանջներին բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած Մասնակցին՝ առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող նույն հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) անվանումը և տեխնիկական բնութագրերը: Առաջին տեղը զբաղեցրած Մասնակիցը երեք աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուի պաշտոնական էլեկտրոնային փոստին՝ g.tovmasyan@mil.am, է ուղարկում նույն ենթակետով նախատեսված փաստաթղթերը:

Նույն ենթակետով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղն զբաղեցրած Մասնակցի հայտը և

փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած Մասնակցին:

Հրավերի 7.7 կետի համաձայն՝...հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Հրավերի 8.1.2 կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած Մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերով նախատեսված փաստաթղթերի և նույն հրավերի 4.3 կետի «դ» ենթակետով նախատեսված փաստաթղթերի, գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած Մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 8.1.3 կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած Մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած Մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած Մասնակցին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Խորհուրդն արձանագրում է, որ Ընկերության հայտով ներկայացված վիրաբուժական կարանյութերի ասեղների բաղադրակազմի տոկոսային հարաբերակցության համարժեքության գնահատման ընթացքում Հանձնաժողովի կողմից հիմք է ընդունվել համացանցային կայքում զետեղված տեղեկատվությունը:

Կարգի 71-րդ կետի համաձայն՝գնահատող հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) տվյալ մասնակցի հայտը մերժվում է.

2) մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Խորհուրդը գտնում է, որ Ընկերության հայտով ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերի գնահատման ժամանակ Պատվիրատուի կողմից հիմք ընդունված՝ ինտերնետային կայքում տեղադրված տեղեկատվությունը չի հանդիսանում պաշտոնական աղբյուրից ստացված տվյալ, կամ իրավասու մարմնի կողմից տրամադրված գրավոր եզրակացություն, հետևաբար, նշված տվյալներին Ընկերության հայտով ներկայացված ապրանքի բնութագրի անհամապատասխանությունը Հանձնաժողովի կողմից չէր կարող ընդունվել որպես Ընկերության հայտը մերժելու իրավական հիմք, իսկ Ընկերության հայտի N 4.1 հավելվածով ներկայացված հայտարարությունը՝ որակվել որպես իրականությանը չհամապատասխանող տեղեկատվություն:

Հրավերի 8.14 կետով նախատեսվել է, որ հայտերի գնահատումը, համեմատումը և հաղթողների որոշումն իրականացվելու է ըստ առանձին չափաբաժինների (եթե ընթացակարգն ունի մեկից ավելի չափաբաժիններ):

Խորհուրդն արձանագրում է, որ Հանձնաժողովի 31.05.2017թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետով նշված անհամապատասխանությունների նկարագրությունն ունի ընդհանրական բնույթ, տարանջատված չէ ըստ առանձին չափաբաժինների, ինչը թույլ չի տալիս միանշանակ ընկալել, թե Ընկերության հայտով ներկայացված կոնկրետ որ չափաբաժնի տեխնիկական բնութագրին են վերաբերում վիրաբուժական կարանյութերի ասեղների համաձուլվածքի բաղադրատարրերի կամ թելի ու ասեղի տրամագծերի հարաբերակցությանը վերաբերող՝ Հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովը չի կատարել Կարգի 49-րդ, ինչպես նաև Հրավերի 7.7-րդ կետերով սահմանված՝ հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ՝ ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագրում հայտնաբերված անհամապատասխանությունները մանրամասն նկարագրելու պահանջը:

Խորհուրդը գտնում է նաև, որ Հանձնաժողովը՝ մերժելով Ընկերության հայտը, խախտել է Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով, Կարգի 49-րդ և 71-րդ, ինչպես նաև Հրավերի 7.7 կետերով սահմանված պահանջները, քանի որ վերջինիս նիստի արձանագրությունը չի պարունակել գնահատման արդյունքում Հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունների սպառիչ և մանրամասն նկարագրությունն՝ ըստ առանձին չափաբաժինների:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ «Լեյկոալեքս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 29.08.2017թ. թիվ 03/26-3/15725-17 գրությամբ «Լեյկոալեքս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ